

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՊՐԵՍՅԱՆ ԱՆՈՒՇ ԳԱԳԻԿԻ

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ՝
ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆԻ ԵՎ ՎԱՁԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է «Մատենադարան» Մերոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳԻ
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ ՀՐԱՅՐԻ
բանասիրական գիտությունների
թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝


Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. հունվարի 15-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝



ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ միջնադարյան գրչաշխարհում Գրիգոր Նարեկացու «Մատենանդեղոսի» երկը շատ տարածված բնագիր էր, որի մասին վկայում են մեծաքանակ ընդօրինակությունները: Տպագրության գյուտից հետո այն ունեցել է նաև բազմաթիվ հրատարակություններ: «Մատենան»-ը բացառիկ է ոչ միայն բովանդակությամբ, այլև լեզվամտածողությամբ: Թեև Նարեկացին դարեր շարունակ ամենաընթերցված հեղինակներից էր, այնուամենայնիվ նրա «Մատենան»-ը ոչ բոլորին էր ընկալելի: Պատճառը թե՛ բնագրի փիլիսոփայական խորքն էր և թե՛ լեզուն: Բնագրի գրեթե անհասկանալի դառնալու պատճառով էլ անհրաժեշտություն էր դարձել այն բացատրել և թարգմանել: Այսպես, Նարեկացին հայ, ֆրանսիացի, ռուս, անգլիացի, իտալացի և այլ թարգմանիչների շնորհիվ իր արժանի տեղն է գրավել համաշխարհային գրականության մեջ, և 2015-ին Հռոմի Ֆրանցիսկոս Առաջին Պապը նրան հռչակել է Տիեզերական եկեղեցու վարդապետ:

Հայաստանում առավել հայտնի են «Մատենան»-ի՝ Մկրտիչ Խերանյանի¹ և Վազգեն Գևորգյանի² արևելահայերեն աշխարհաբար չափաժո թարգմանությունները: Հայ ընթերցողը հաճախ դրանց շնորհիվ է հաղորդակից դարձել Նարեկացու երկին, և մենք փորձել ենք մանրամասնորեն քննել այդ երկուսը՝ որոշ հատվածների ուսումնասիրման դեպքում անդրադառնալով նաև մյուս թարգմանություններին:

Մեր օրերում մեծապես ավելացել են թարգմանությունները, սակայն դրանց ուսումնասիրությունը քիչ ուշադրության է արժանացել: Նարեկացու երկի օտարալեզու թարգմանությունների ուսումնասիրման ոլորտում կարևոր ներդրում ունի Մ. Ջանփոլադյանը՝ «Մատենան»-ի ռուսերեն թարգմանությունների հանգամանակից քննությամբ³: Այնինչ Խերանյանի և Գևորգյանի թարգմանություններին անդրադարձ է կատարվել միայն առանձին հոդվածներով: Խերանյանի թարգմանության որակի քննություն է կատարել Ս. Շոխլյանն իր «Գրիգոր Նարեկացու աշխարհաբար թարգմանությունները»

¹ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մապյան ողբերգության*, գրաբարից թարգմանեց **Խերանյան Մ.**, Երևան, Հայպետհրատ, 1960:

² Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մապյան ողբերգության*. *Տաղեր*, թարգմանություն **Գևորգյան Վ.**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1979:

³ Տե՛ս **Джанполадян М.**, «Книга скорби» *Нарекаци в русских переводах и критике*. *Монография*, Ереван, изд. ЕГУ, 2012.

հողվածում⁴: Գևորգյանն իր թարգմանության մասին գրել էր դեռևս 1968-ին «Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի աշխարհաբար նոր թարգմանության մասին» հոդվածում⁵:

Սույն ատենախոսությամբ անդրադարձ է կատարվում թարգմանական գրականության քիչ ուսումնասիրված մի նյութի: Խերանյանի և Գևորգյանի թարգմանություններում հանգամանորեն քննության են առնվում «Մատեան»-ի հատկապես այն առանձնահատկությունները, որոնց թարգմանության համար միայն գրաբարի և աշխարհաբարի իմացությունը բավարար չէ: Հաջող թարգմանություններ ունենալու համար անհրաժեշտ է ներթափանցել թարգմանվող երկի ստեղծման ժամանակաշրջանի, սովորույթների, ինչպես նաև հեղինակի ոճի, ճաշակի ու մտածելակերպի աշխարհ:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Խերանյանի և Գևորգյանի թարգմանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ինչպես գնահատելու և արժևորելու թարգմանիչների կարևոր ու դժվարին աշխատանքը, այնպես էլ վեր հանելու և շեշտելու թարգմանական այն խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնք անհրաժեշտ են ապագայում «Մատեան»-ի նոր և ավելի կատարյալ թարգմանություններ ունենալու համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ատենախոսության **նպատակն է՝** բնագրի, ինչպես նաև այն հասկանալի դարձնելու համար գրված միջնադարյան Լուծմունքի ու մեկնությունների և «Մատեան»-ի՝ տարբեր ժամանակներում ստեղծված թարգմանությունների համեմատական վերլուծության հիման վրա համակողմանի քննության ենթարկել Խերանյանի և Գևորգյանի թարգմանությունները՝ դրանք դիտարկելով թարգմանական տեսության խնդիրների տեսանկյունից: Կարևոր ենք համարել ցույց տալ նաև այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք կօգնեն ապագա թարգմանիչներին ավելի լավ հասկանալու Նարեկացուն և ընկալելի ու ճիշտ ներկայացնելու նրա «Մատեան»-ը: Հետևաբար, ձեռնամուխ լինելով «Մատեան»-ի՝ Խերանյանի ու Գևորգյանի թարգմանությունների հնարավորինս հանգամանալից ուսումնասիրությանը, մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները.**

⁴ Տե՛ս **Շտիկյան Ս.**, «Գրիգոր Նարեկացու աշխարհաբար թարգմանությունները», [http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20\(antip\).pdf](http://kalantarian.org/shtikyan/work/Hod.1960%20(antip).pdf):

⁵ **Գևորգյան Վ.**, «Գրիգոր Նարեկացու Մատյան ողբերգության պոեմի աշխարհաբար նոր թարգմանության մասին», *Բանբեր Երևանի համալսարանի*, Երևան, «Միտք» հրատ., 1968 (2), էջ 168-172:

1. Բազմակողմանի քննության ենթարկել նշված աշխարհաբար թարգմանությունները:

2. Ընտրված օրինակների միջոցով պարզել թարգմանությունների հարազատությունը բնագրին:

3. Ներկայացնել, թե ինչ եղանակներ ու միջոցներ են ընտրվել բնագրի հնչերանգային-ռիթմական առանձնահատկությունները թարգմանություններում արտահայտելու համար:

4. Բացահայտել՝ ինչպիսի պատկերավորման և արտահայտչական միջոցներով են թարգմանիչները վերստեղծել հեղինակի յուրօրինակ ոճը:

5. Դիտարկել՝ ինչպես են թարգմանիչներն ընկալել և աշխարհաբարով մեկնաբանել ու վերարտադրել միջնադարյան երկի բառապաշարը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք բնագրի և Խերանյանի ու Գևորգյանի թարգմանությունների, ինչպես նաև մասնագիտական գրականության և գրականության տեսության համադիր քննության ու պատմահամեմատական վերլուծության **մեթոդներով**:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընդգրկում է «Մատեան»-ի ստեղծման ժամանակաշրջանը՝ 10-11-րդ դարերը: «Մատեան»-ն ամբողջացվել է հեղինակի կյանքի վերջին տարիներին՝ 1001-1003-ին, բայց արարվել է նրա ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում: Ատենախոսության հետազոտման համար նյութ են դարձել «Մատեան»-ի՝ 1960-ին լույս տեսած Խերանյանի և 1979-ին հրատարակված Գևորգյանի թարգմանությունները: Որոշ հատվածների ուսումնասիրման դեպքում անդրադարձել ենք Նարեկացու երկի մյուս աշխարհաբար թարգմանություններին, որոնք ստեղծվել են 20-րդ դարի ընթացքում: Քննության են առնվել նաև «Մատեան»-ի՝ 15-րդ դարում գրված միջնադարյան Լուծմունքն ու 18-19-րդ դարերի՝ Հ. Նալյանի ու Գ. Ավետիքյանի մեկնությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության էջերում հայագիտության մեջ առաջին անգամ կատարվում է «Մատեան»-ի երկու առավել հայտնի աշխարհաբար թարգմանությունների համակողմանի հետազոտություն: Խերանյանի և Գևորգյանի թարգ-

մանությունների օրինակով փորձ է արվում ուսումնասիրելու՝ ինչպես են թարգմանիչներն ընկալել և ժամանակակից հայերենով մեկնաբանել ու վերարտադրել միջնադարյան երկը, ինչ խնդիրներ է բնագիրը դրել թարգմանչի առաջ, և դրանց լուծման ինչ մեթոդներ ու եղանակներ են ընտրվել:

Սույն ատենախոսությունն ընդգրկում է **գիտական** հետևյալ **նորոյթները**.

1. «Մատեան»-ի՝ մեր ուսումնասիրության շրջանակում ընդգրկված թարգմանություններն առաջին անգամ քննվում են ըստ հնչերանգային-դիֆունական, պատկերավորման ու արտահայտչական և բառապաշարային տարանջատման:

2. Հիմք ընդունելով թարգմանության տեսաբանների ուսումնասիրությունները՝ միջնադարյան երկի թարգմանությունները դիտարկվում են թարգմանաբանության տեսանկյունից:

3. Թարգմանություններն առաջին անգամ են ուսումնասիրվում ոչ միայն բնագրի հետ ունեցած ընդհանրությունների ու տարբերությունների, այլև միջնադարյան Լուծմունքի և 18-19-րդ դարերում ստեղծված մեկնությունների հետ համեմատության տեսանկյունից:

Ատենախոսությունն ունի **ճանաչողական և կիրառական նշանակություն**: Դրա առանձին դրույթներ կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգում՝ «Թարգմանական արվեստ» դասընթացի ուսումնական ծրագրում: Ուսումնասիրությունը կարող է նաև գիտագործնական նշանակություն ունենալ թարգմանիչների համար, իսկ եզրակացությունները՝ ուղղորդող դեր ընթերցողի համար՝ Նարեկացու երկի թարգմանությունները գնահատելու տեսանկյունից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան գրականության և բանասիրության բաժնի կողմից: Ուսումնասիրության կարևոր դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական յոթ հոդվածներում, ինչպես նաև միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովներում ներկայացված թեզիսներում ու ելույթներում: Հրատարակված գիտական հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

**ԹԵՄԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ
(ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ)**

Ատենախոսությունը շարադրված է «Մատեն»-ի բնագրի, դրա աշխարհաբար թարգմանությունների, ձեռագիր և տպագիր սկզբնաղբյուրների, ինչպես նաև հայերեն ու օտարալեզու ուսումնասիրությունների հիման վրա:

Նարեկացիագիտության ամենակարևոր ձեռքբերումներից է «Մատեն»-ի գիտաքննական հրատարակությունը՝ Պողոս Խաչատրյանի և Արշալույս Ղազինյանի աշխատասիրությամբ: Այն լույս է տեսել Երևանում 1985-ին, պատրաստված է վաթսունմեկ ձեռագրի և սկզբնաղբյուրի արժեք ունեցող տպագիրների տվյալների մանրակրկիտ համեմատությամբ ու քննությամբ, ունի առաջաբան, տարընթերցվածների բաժին, աղբյուրների հղումներ և հանգամանալից ծանոթագրություններ, որտեղ արտացոլվել են նարեկացիագիտության ձեռքբերումները⁶: Ուստի ատենախոսության մեջ այս հրատարակությունից են կատարված բնագրային մեջբերումները:

1985-ի քննական բնագրի հիման վրա «Մատեն»-ը վերահրատարակվել է նաև 2008-ին «Մատենագիրք Հայոց» մատենաշարում՝ աշխատասիրությամբ Հրաչյա Թամրազյանի⁷: Մատենաշարն ընդգրկում է Նարեկացու նաև մյուս երկերի քննական բնագրերը, իսկ առաջաբանում անդրադարձ է կատարվում հեղինակի կյանքին և ստեղծագործության առանձնահատկություններին:

Աստվածային ներշնչանքով ստեղծված «Մատեն»-ը՝ ներիյուված միջնադարի այլաբանական մտածողությանը, անհասկանալի էր շատերին, և միայն քչերը կարող էին ընկալել այն: Հետևաբար 13-19-րդ դարերում գրվել են լուծմունքներ ու մեկնություններ, որոնցով մեկնիչները փորձել են հասկանալի դարձնել Նարեկացուն: Հեղինակին հասկանալու և թարգմանիչների կատարած աշխատանքը ճիշտ գնահատելու համար մենք ևս դիմել ենք միջնադարյան Լուծմունքին ու մեկնություններին.

ա) «Մատեն»-ի միջնադարյան Լուծմունքն ինքնին միասնական բնագիր չէ. այն բաժանված է չորս առանձին խմբագրությունների, որոնք պայմանականորեն անվանվել են առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ՝ ըստ ժամանակագրության⁸: Լուծմունքի առաջին խմբագրության հնագույն տարբե-

⁶ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, *Մազեան ողբերգութեան*, աշխատասիրությամբ՝ **Խաչատրյան Պ. և Ղազինյան Ա.**, Երևան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ., 1985:

⁷ Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեն ողբերգութեան, *Մազեանագիրք Հայոց*, ԺԲ հտ., Ժ դար, կազմեց՝ **Թամրազեան Հ.**, Անթիլիաս-Լիբանան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2008, էջ 49-605:

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս **Խաչատրյան Պ.**, *Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ., 1996, էջ 238-248:

ցել Արշալույս Ղազինյանի «Գրիգոր Նարեկացի, բանաստեղծական արուեստը» աշխատությունը¹⁶:

«Մատենա»-ի կառուցվածքի հիմքում ընկած բանաստեղծական արվեստի սկզբունքների ու խնդիրների, ինչպես նաև բնագրի ստեղծման ճանապարհին հեղինակի թողած ուղենիշերի մեջ ներթափանցելուն նպաստել են Հրաչյա Թամրազյանի «Նարեկյան դպրոցը»¹⁷ և «Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը»¹⁸ ուսումնասիրությունները:

Գեղարվեստական երկի բառապաշարի և դարձվածաբանության, դիմիկ կառուցվածքի ու հանգավորման և այլ արտահայտչամիջոցների քննության համար նյութ ենք քաղել Վարազ Առաքելյանի «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը»¹⁹, Էդվարդ Զրբաշյանի «Գրականության տեսություն»²⁰ և Վարազ Ներսիսյանի «Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները (XIII-XVI դդ.)»²¹ ուսումնասիրություններից:

Գրականության տեսությանը վերաբերող հարցերին անդրադառնալու համար կարևոր աղբյուր է ծառայել չեխ տեսաբան Իրժի Լևիի «Թարգմանության արվեստը» աշխատությունը²²: Թարգմանական գործընթացի (տեքստի ընկալման, մեկնաբանման և վերարտադրման) Լևիի նկարագրությունը հիմք ենք ընդունել միջնադարյան բնագրի աշխարհաբար թարգմանությունների քննության համար:

Գեղարվեստական երկի թարգմանության և այն գնահատելու տեսանկյունից արժեքավոր է թարգմանիչ և թարգմանության տեսաբան Անդրեյ Ֆյոդորովի «Գեղարվեստական թարգմանության մասին» աշխատությունը²³: Սույն ատենախոսության համար կարևորվում է նաև լեզվաբան և թարգմանության տեսաբան Վիլեն Կոմիսարովի «Ժամանակակից թարգմանաբանությունը» ուսումնասիրությունը²⁴, որտեղ քննվում է այն հարցը, թե ինչ պատճառներով է թարգմանությունը հեռանում բնագրից:

¹⁶ Տե՛ս **Ղազինեան Ա.**, *Գրիգոր Նարեկացի, բանաստեղծական արուեստը*, Անթիլիաս-Լիբանան, 1995:

¹⁷ Տե՛ս **Թամրազյան Հ.**, *Նարեկյան դպրոցը*:

¹⁸ Տե՛ս **Թամրազյան Հ.**, *Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը*, Երևան, «Նաիրի» հրատ., 2004:

¹⁹ Տե՛ս **Առաքելյան Վ.**, *Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

²⁰ Տե՛ս **Զրբաշյան Էդ.**, *Գրականության տեսություն*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1972:

²¹ Տե՛ս **Ներսիսյան Վ.**, *Հայ միջնադարյան տաղերգության գեղարվեստական միջոցները (XIII-XVI դդ.)*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1976:

²² Տե՛ս **Левый И.**, *Искусство перевода*, Москва, изд. «Прогресс», 1974.

²³ Տե՛ս **Федоров А.**, *О художественном переводе*, Ленинград, «Гослитиздат», 1941.

²⁴ Տե՛ս **Комиссаров В.**, *Современное переводоведение*, Москва, изд. «ЭТС», 2002.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված են աշխատանքի գիտական նորոյթը և հարցի պատմությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ՄԱՏԵԱՆ»-Ի ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ-ՈՒԹՄԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «**Բանաստեղծական չափը թարգմանություններում**», նշել ենք, որ «Մատեան»-ի մեծ մասը գրված է հայկական բանաստեղծության ամենատարածված չափով՝ հնգավանկ անդամներով: Սակայն մեզ համար ուշադրության արժանի են դարձել հատկապես այն հատվածների թարգմանությունները, որոնք հորինվել են այլ չափերով, որոնց գլուխները կառուցվել են ավելի ազատ՝ մոտենալով արձակ խոսքին, տողերը կազմվել են անհավասար թվով անդամներից, անդամները՝ անհավասար վանկերից և այլն: Նկատելի է, որ բնագրի բանաստեղծական չափը միշտ նույնությամբ չէր կարող վերստեղծվել թարգմանություններում՝ գրաբարի և աշխարհաբարի միջև առկա տարբերությունների հետևանքով: Այսպիսի դեպքերում պետք է հաշվի առնել, որ չափը բխում է բանաստեղծական տրամադրությունից: Ուստի կարևոր է այդ տրամադրությունն արտահայտելը, և պարտադիր չէ, որ թարգմանիչները միշտ նույնությամբ պահպանեն բնագրի չափը:

Երկրորդ ենթագլխում՝ «**Հանգիտությունը թարգմանություններում**», ուսումնասիրել ենք հանգիտության՝ նույն կամ նման հնչյունների հետևողական կրկնության երկու ձևերը՝ *բաղաձայնոյթը* և *առձայնոյթը*: Հանգիտությանը հեղինակը գիտակցաբար է դիմել, քանի որ յուրաքանչյուր կրկնվող հնչյուն, բացի արտահայտչականությունից, իմաստային դեր է կատարել: Հատկանշական է այն, որ «Մատեան»-ը ոչ միայն առավել հարուստ է բաղաձայնների կրկնությամբ, այլև բացառիկ՝ դրանց ընտրությամբ, քանի որ բաղաձայնոյթ է ստեղծվել այնպիսի հնչյուններով, որոնց կրկնությունն այլ երկերում հազվադեպ է հանդիպում (*տ, թ, ծ, ճ*): Քննել ենք նաև այն հատվածների թարգմանությունները, ուր հեղինակը առձայնոյթն ու բաղաձայնոյթը միասին է գործածել՝ միևնույն կամ զուգահեռ տողերում՝ իրավիճակները, հույզերն ու ապրումները նկարագրելու, դրանք ավելի տեսանելի ու ազդեցիկ դարձնելու

համար: Առանձնակի կարևորություն ունի Նարեկացու ստեղծած հանգիտության ավելի բարդ կառույցների՝ *տողասկզբի ու տողավերջի բառի և տառի նմանաձայնության, հարևան բառերի նույն կամ նման հնչյունների հերթազարկության և շղթայահար հանգիտության* թարգմանությունների ուսումնասիրությունը:

Երրորդ ենթագլխում՝ «**Հանգը թարգմանություններում**», պարզել ենք, թե ինչպես են թարգմանիչներն արտահայտել «Մատեան»-ում հանդիպող ամենաբազմազան հանգերը, քանի որ դրանց միջոցով Նարեկացին ոչ միայն բարձրացրել է խոսքի հուզականությունը, այլև առավել ընկալելի է դարձրել իր գաղափարները: Բնագրում և թարգմանություններում ուսումնասիրել ենք ամենառիթմիկ, երաժշտական հատվածների՝ լայաց երգերի նմանությամբ գրված *ԻԶ* գլխի *ի* (տ. 21-84) և *ԼԹ* գլխի *ոյս* հանգերը (տ. 20-24, 77-95): Անդրադարձել ենք «Մատեան»-ի ամենաբնորոշ ներքին հանգին՝ *ԶԳ* գլխում (տ. 32-45), Նարեկացու ստեղծած նոր հանգավորմանը՝ *ԻԵ* գլուխը եզրափակող *աւր* հանգին, բազմահանգությամբ ուշագրավ *ԺԳ* գլխի՝ *թինս, մունս, իս, ոյս* հանգերին, ինչպես նաև՝ դերբայական *եալ* (ԻԳ, տ. 17-58), բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքի՝ *ցայ* (ԻԴ, տ. 2-18, 20-29) և երրորդ դեմքի՝ *եաց* (ԻԹ) հանգերին:

Չորրորդ ենթագլխում՝ «**Ռիթմը թարգմանություններում**», կարևորել ենք այն, որ, ինչպես յուրաքանչյուր լեզվին բնորոշ են իր ռիթմական առանձնահատկությունները, այնպես էլ տարբեր բանաստեղծությունների ձայնային ձևը տարբեր է: Քննության ենք առել «Մատեան»-ի այն հատվածների թարգմանությունները, երբ հնգավանկ անդամներով գրված տողերի մեծ մասում ռիթմը համընկել է ավարտուն շարահյուսական միավորի հետ՝ ստեղծելով հավասարաչափ ռիթմ: Ուշադրության ենք արժանացրել նաև այն հատվածները, երբ ռիթմն ապահովել են բանաստեղծական տողը կամ կիսատողը, բառերի ու շարահյուսական միջոցների կանոնավոր կրկնություններն ու ռճական տարբեր հնարքները: Այդ հնարքներից թարգմանություններում առանձնացրել ենք՝ *ա) կրկնվող բառերի շեշտվածությունը*, որը ստեղծել է հավասարաչափ ռիթմ, *բ) բառերի հափուկ տեղայնացվածությունը*, որով տարանջատվել են տողը կազմող իմաստային միավորները, *գ) երկու իրարից անջատ բառերում նույն արմատի կրկնությունը*, որի շնորհիվ դրանց միջև արտասահմանական դադար է տրվել: Եկել ենք այն եզրահանգման, որ «Մատեան»-ի առանձնահատուկ ռիթմը միշտ չէր կարող նույնությամբ պահպանվել թարգմանություններում, ուստի թարգմանիչները տարբեր հնարքներ են կիրառել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
«ՄԱՏԵԱՆ»-Ի ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլուխը տրոհված է երկու ենթագլուխների: Առաջինում **«Պատկերավորման միջոցները թարգմանություններում»**, ներկայացրել ենք, թե ինչպես են թարգմանիչներն աշխարհաբարով արտահայտել գեղարվեստական պատկերավորման միջոցները՝ *մակդիրը*, *փոխաբերությունը*, *փոխանունությունը*, *շրջասությունը*, որոնց ընտրությունը «Մատեան»-ում պայմանավորվել է հեղինակի ոճով, նախասիրություններով, գեղագիտական ճաշակով ու աշխարհընկալմամբ:

Բնագրի և թարգմանությունների համեմատական ուսումնասիրությամբ պարզել ենք, որ ամենից հաճախ գործածվող՝ *քնարական հերոսին* և *Աստուծո՛ւ բնորոշող մակդիրները* թարգմանիչները տարբեր սկզբունքով են արտահայտել: Այնինչ *գունային սիմվոլիկան* ինչպես բնագրում, այնպես էլ թարգմանություններում պայմանավորվել է բովանդակությամբ. հեղինակի՝ հուսահատության և մտորումների տրամադրություններն արտահայտվում են «արջնաթույր», «սևաթույր» մակդիրներով, իսկ «հրաշեկը», «բոցեղենը» ունեն լույսի, պայծառության ու հրաշքի խորհուրդ: *Ձայն խորհրդանշող մակդիրները*, որոնք մերթ ավետաբեր են ու օրինաբան, մերթ լալագին ու կարկամ, գրեթե միշտ ստեղծվել են *ձայն* բառի զուգորդմամբ:

Կարևոր է եղել թարգմանություններում պահպանել նաև բնագրի *փոխաբերական արտահայտություններն* ու *ծավալուն պատկերները*, քանի որ հեղինակը դրանց շնորհիվ ներթափանցել է այլ ոլորտներ՝ ընկալելի դարձնելով ներքին, վերերկրային և աննյութեղեն աշխարհները: «Մատեան»-ի փոխաբերական պատկերները միջնադարյան մտածողության գեղարվեստական արտացոլումն են և կառուցված են բովանդակության ու ձևի միասնությամբ՝ ունենալով սկիզբ, զարգացում և հանգուցալուծում: Անդրադարձել ենք «Մատեան»-ի ամենահայտնի՝ *նավաբեկության տեսարանին*, որն ինչպես բնագրում, այնպես էլ թարգմանություններում պատկերվել է նավի հատվածների այլաբանական նկարագրությամբ՝ բացահայտելով մարդու ներաշխարհում կատարվող ալեկոծումները (բան ԻԵ):

Փոխանունությունների թարգմանությունը քննության ենք առել՝ նկատի ունենալով, որ հեղինակն այն ոճական տարբեր ձևերով է կառուցել: Դրանցից ուշագրավ է հատկապես աստվածաշնչյան անձնանունների փոխաբանությունները գործածելու հնարքը, որը հնարավորություն է տվել հեղինակին նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը որոշել՝ խուսափելով նաև անձնանունների կրկնություններից (*Սողոմոն՝ «իմաստուն»*, *Մովսես՝ «աստվածաշնորհ»*,

Առանձնակի կարևորություն ունեն *մեջբերումների, թևավոր խոսքի ու ասացվածքի արժեք ունեցող արտահայտությունների* պահպանումը թարգմանություններում, քանի որ մեջբերումները հիմնականում Սուրբ Գրքից են, սաղմոսներից և մարգարեություններից, որոնք նկարագրում են որևէ դեպք, իրադարձություն և հաճախ նյութ են հանդիսանում այս կամ այն մտքի հաստատման համար: Մինչդեռ թևավոր խոսքերն ու ասացվածքները սուր երանգ և արտահայտչականություն են հաղորդում երկին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«ՄԱՏԵԱՆ»-Ի ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բառապաշարի թարգմանության ժամանակ առաջացած խնդիրներից, ինչպես նաև հնարավոր սխալներից ու բացթողումներից խուսափելու համար ուսումնասիրողները մատնանշել են թարգմանական գործընթացի հատուկ հերթագայություն, որն էլ հնարավորություն է տվել ստեղծելու բնագրին մոտ թարգմանություն: Թարգմանության ժամանակ առաջացած խնդիրներից, ինչպես նաև հնարավոր սխալներից ու բացթողումներից խուսափելու համար շեշտել ենք հատկապես *համապոեքսպի* դերը: Վերջինս շատ կարևոր է նկատի ունենալ «Մատեան»-ի թարգմանության համար, քանի որ նույն բառը տարբեր համատեքստում տարբեր իմաստներով է գործածվում: Բառացի կամ բառարանային թարգմանության դեմ մշտապես պայքարել են նաև տեսաբանները: Հետևաբար Խերանյանի և Գևորգյանի թարգմանությունների համար նույնպես կարևորել ենք այն, որ բառարանային թարգմանությունը դեռ չի վկայում իմաստի ճիշտ արտահայտման մասին: Թարգմանության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել *թարգմանվող երկի ստեղծման ժամանակաշրջանը*, քանի որ, կախված տվյալ միջավայրից և մտածողությունից, տարբեր են նաև բառերի նշանակությունները: Այս տեսանկյունից անդրադարձել ենք «Մատեան»-ում հանդիպող միջնադարյան մտածողությանն ու սովորույթներին բնորոշ բառերի ու արտահայտությունների թարգմանություններին: Կարևոր է նկատի ունենալ նաև ստեղծագործության *հեղինակի մրադրությունը*, քանի որ երբեմն ոչ ճիշտ բառն է ներառվում հեղինակի հայացքների համակարգում՝ առաջ բերելով «մտադրության չհասկացվածություն»²⁶: Առանձնացրել ենք բնագրի նաև այն բառերը, արտահայտություններն ու տողերը, որոնք դժվարթարգմանելի լինելու կամ անուշադրության հետևանքով դուրս են մնացել թարգմանություններից, երբեմն էլ ճիշտ չեն թարգմանվել:

Հատուկ ուշադրություն ենք դարձրել «Մատեան»-ի *նորաբանություններին*, որոնք հանդիպում են բոլոր հատվածներում, սակայն դրանցով առավել

²⁶ Левый И., նշվ. աշխ., էջ 58:

հագեցած են ԽԸ, ՂԲ, ՂԳ գլուխները: ՂԲ և ՂԳ գլուխները Խերանյանն ու Գևորգյանը չեն ընդգրկել իրենց թարգմանություններում, հետևաբար բնագրում և թարգմանություններում դիտարկել ենք հատկապես ԽԸ գլխի նորակազմությունները: «Մատեան»-ը հայտնի է ոչ միայն նորակազմ բառերի այնպիսի քանակով, որ հազվագյուտ երկերում կարելի է գտնել, այլև ձևով ու իմաստով: Հաճախ նորակազմությունների իմաստից է կախված ամբողջ հատվածի բովանդակությունը. նշանակում է՝ դրանց ճիշտ թարգմանությունը կարևոր է ոչ միայն բնագիրը գեղագիտորեն արտահայտելու, այլև բովանդակությունը փոխանցելու համար:

Այս գլխի քննության մեջ անդրադարձել ենք նաև «Մատեան»-ի, դրա տարատեսակ մեկնությունների ու թարգմանությունների փոխառնչությունների վերլուծությանը, քանի որ միջնադարյան մեկնիչները և ապա նաև Նալյանն ու Ավետիքյանը սկզբունքային նպատակադրությամբ առաջադրել են բնագրի մեկնության հարցը: «Մատեան»-ի թարգմանությունների քննությունից, ինչպես նաև թարգմանիչների վկայություններից ակնհայտ է, որ իրենք անդրադարձ են կատարել մեկնություններին, ինչպես նաև ինքնուրույն, հենց թարգմանության ընթացքում յուրովի մեկնություններ իրականացրել: Քանի որ միջնադարին բնորոշ էր այլաբանական մտածողությունը, ապա մեկնություններն առաջին հերթին օգնել են բացահայտելու «Մատեան»-ի խորհրդանշական աշխարհը: Նարեկացու երկի համար, իհարկե, ամենակարևորը *մեկնությունն է ըստ Աստվածաշնչի*: «Մատեան»-ի մեկնությունները թարգմանիչների համար կարևորվել են նաև թվերի ու տառերի խորհրդավորության բացահայտմամբ (*ԻՉ գլխում՝ 20, ԿԵ՝ 1000, ՂԳ՝ 80 և 400 թվերի վերաբերյալ*²⁷): Ակնհայտ է, որ մեկնություններն օգնել են հասկանալ սուրբգրային ենթատեքստը և ըստ այդմ թարգմանել, սակայն բնագրի իմաստի բացահայտման ընթացքում դրանց հետևելը կարող էր նաև բացասաբար անդրադառնալ թարգմանության ճշգրտության վրա, ուստի կարևորել ենք «*թարգմանչի մեկնողական դիրքորոշումը*»²⁸, որը թարգմանական բանաձևի էական կետերից է:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացություններում տրված են ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

1. Բանաստեղծական չափի, հանգիտության, հանգի ու ռիթմի առանձնահատկությունները պակաս կամ առավել չափով են արտահայտվել Խերանյանի ու Գևորգյանի թարգմանություններում, որը պայմանավորվել է աշխարհա-

²⁷ Տե՛ս Թամրազյան Հ., *Գրիգոր Նարեկացին և նորավարոնականությունը*, էջ 121:

²⁸ *Левый И.*, նշվ. աշխ., էջ 70:

բարի ու գրաբարի քերականական տարբերություններով, թարգմանչի ոճով ու ճաշակով: Բանաստեղծական տարբեր չափերով գրված հատվածներում Խերանյանը պահպանել է բնագրային ձևը և թարգմանել է տարբեր չափերով: Գևորգյանը բացառապես հինգվանկանի հավասարաչափ տողեր է ստեղծել՝ գտնելով նրբիմաստով, բովանդակությամբ ու չափին համապատասխանող բառը:

2. Հանգիտության ձևերը Խերանյանի թարգմանության մեջ հիմնականում նույնությամբ են արտահայտվել՝ բացառությամբ այն հատվածների, երբ տառակրկնությունը վերջակրկնության արժեք է ձեռք բերել կամ կրկնվող տարրերը փոխարինվել են դրանց մոտ կամ նման հնչյուններով: Գևորգյանը, տուրք տալով բանաստեղծական չափին, ոչ բոլոր հնչյունական կրկնություններն է հնարավորություն ունեցել պահպանել:

3. Բնագրի բազմահանգ հատվածները երկու թարգմանություններում էլ արտահայտվել են աշխարհաբար համարժեքներով: Հեղինակի ստեղծած հանգի նոր դրսևորումների ու ամենակարևոր՝ ներքին հանգավորման առանձնահատկությունները թարգմանիչներին մասամբ է հաջողվել պահպանել, իսկ դրանցից ամենականոնավորներն ու ոճով տարբերվողները դժվար-թարգմանելի լինելու հետևանքով չեն ընդգրկվել թարգմանություններում:

4. Բառային ու շարահյուսական միջոցներով, ոճական հնարքներով (կրկնություն, բառերի հատուկ տեղայնացվածություն, ներքին ռիթմ) պայմանավորված ռիթմական նրբությունները թե՛ Խերանյանի, թե՛ Գևորգյանի թարգմանության որոշ հատվածներում պահպանվել են: Երբեմն էլ ռիթմական արժեք ունեցող բառերի, ինչպես նաև դրանց տեղի աննշան փոփոխությունն անգամ խախտել է բնագրի համաչափությունը, և միայն Գևորգյանի թարգմանության առանձին հատվածներում է ռիթմը վերստեղծվել՝ շնորհիվ թարգմանական տարբեր հնարքների:

5. Խերանյանն ու Գևորգյանը տարբեր սկզբունքով են թարգմանել պատկերավորման և արտահայտչական միջոցները: Վերջինիս թարգմանությունն ավելի վառ է և գունեղ: Նա բնագրի մակդիրները արտահայտել է ոչ միայն առավել պատկերավոր հոմանիշներով, այլև իր թարգմանությունը հարստացրել է նոր մակդիրներով: Մինչդեռ Խերանյանը մակդիրները թե՛ նույնությամբ է թարգմանել կամ փոխարինել այլ նրբերանգներով և թե՛ երբեմն առարկայացրել է:

6. Փոխաբերական արտահայտություններն ու պատկերների մեծ մասն ուղիղ իմաստով են թարգմանվել, քանի որ աշխարհաբարը հնարավորություն չի տվել արտահայտելու դրանց բազմիմաստությունն ու միջնադարյան այլաբանությունը: Իսկ սուրբգրային հարասությունների ծանոթագրված չլինելու արդյունքում միտքը երբեմն հասկանալի չէ՝ հատկապես, երբ փոխանունները բացատրված չեն:

7. Բնագրային կրկնությունները Խերանյանի թարգմանության մեջ հիմնականում պահպանվել են: Գևորգյանի թարգմանության մեջ բաղադրիչներն արտահայտվել են կառուցվածքային և հնչերանգային տարբերություններով: Մնացած դեպքերում արտահայտչական միջոցների արտահայտված չլինելն ու նույնիսկ դրանց տեղի, դիրքի փոփոխությունն ազդել է թարգմանության որակի վրա, քանի որ թուլացել են բնագրի ոճական առանձնահատկությունն ու բանաստեղծական ռիթմը:

8. Բնագրի քերականական որոշ ձևեր (գրաբարի անցյալ դերբայի *-եալ* վերջավորություն, *-եսցի*, *-ասցի*, *-ցի* բայաձևեր, *առ*, *զ*, *ընդ* նախդիրներ և այլն) աշխարհաբար թարգմանություններում հնարավոր չի եղել փոխանցել կամ փոխարինել դրանց նույնանման վերջավորություններով ու ձևերով:

9. Թևակտոր խոսքի ու ասացվածքի արժեք ունեցող արտահայտությունների հեշտթարգմանելի լինելը հնարավորություն է տվել պահպանելու և՛ հակիրճությունը, և՛ բովանդակությունը, իսկ որոշ դեպքերում՝ գրաբարյան բառի փոխարինումը իմաստի մեկնությամբ, ամբողջական արտահայտությամբ դրանք վերածել են սովորական արտահայտության: Գևորգյանի թարգմանության այսպիսի հատվածներն առավել արտահայտիչ են՝ պայմանավորված աշխարհաբարում ընտրված բառերի նրբերանգներով:

10. «Մատեան»-ի բառերի, բառ-պատկերների առանձնահատկությունը Խերանյանը պահել է՝ փորձելով մոտ մնալ բնագրին, և միայն առանձին դեպքերում են հանդիպում այլակերպ թարգմանություններ: Գևորգյանը բանաստեղծական չափը պահելու նպատակով նախընտրել է ընդհանուր իմաստը և բառերի մեծ մասը թարգմանել է հոմանիշով կամ նոր բառի հավելումով:

Նորակազմությունների մեծ մասը նույնությամբ կամ հոմանիշով է արտահայտվել թարգմանություններում: Ուրիշ դեպքերում Խերանյանը թարգմանել է ամբողջական արտահայտությամբ, Գևորգյանը՝ պատկեր-արտահայտությամբ: Միջնադարյան մտածողությանը բնորոշ այլաբանությունն ու պատկերավորությունն արտահայտող բառերը Խերանյանը թարգմանել է կամ ճշգրտորեն, կամ իմաստային մեկնություն է տվել: Գևորգյանն արտահայտել է արդի նշանակությամբ:

11. Բնագրի բառապաշարն ընկալելու համար երկու թարգմանիչներն էլ առաջնորդվել են Սուրբ Գրքի, բառարանների բացատրություններով կամ յուրովի մեկնություններ իրականացնելով: Սուրբգրային ծանոթագրումների տեսանկյունից երկու թարգմանություններն էլ թերի են, որը պայմանավորված էր խորհրդային ժամանակաշրջանով: Խերանյանի թարգմանության մեջ որոշ հատվածներ ծանոթագրվել են, որի շնորհիվ հասկանալի են դարձել և՛ իմաստը, և՛ աղբյուրը, իսկ Գևորգյանի թարգմանությունը չունի ծանոթագրություններ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ
ՇԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.**

1. Ապրեսյան Ա., Կրկնության արտահայտչականությունը Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի աշխարհաբար թարգմանություններում, *Հայագիտական հանդես*, Երևան, 2019, №2(44), էջ 91-101:
2. Ապրեսյան Ա., Հանգի դրսևորումները Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկում և աշխարհաբար թարգմանություններում, *Պատմաբանասիրական հանդես*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, №1(207), էջ 207-216:
3. Ապրեսյան Ա., Գրիգոր Նարեկացու «Մատենանը» Վազգեն Գևորգյանի թարգմանությամբ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, №3(651), էջ 169-181:
4. Ապրեսյան Ա., Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի արևելահայ աշխարհաբար թարգմանությունների շուրջ, *Բանբեր հայագիտության*, Հայագիտական միջազգային հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, №3(15), էջ 206-218:
5. Ապրեսյան Ա., Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» պոեմի թարգմանությունները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, №2(647), էջ 205-212:
6. Ապրեսյան Ա., Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի մեկնությունները և աշխարհաբար թարգմանությունները, *Բանբեր Մատենադարանի*, Երևան, «Նաիրի» հրատ., 2015, №22, էջ 318-333:
7. Ապրեսյան Ա., Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկի առաջին թարգմանիչները, *Բանբեր հայագիտության*, Հայագիտական միջազգային հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, №1(4), էջ 173-183:

ANUSH APRESYAN
“BOOK OF LAMENTATIONS” BY GRIGOR NAREKATSI IN
MKRTICH KHERANYAN'S AND VAZGEN GEVORGYAN'S
TRANSLATIONS

**Dissertation for obtaining the scientific degree of Candidate of
Philological Sciences, in the specialty 10.01.01 – “Armenian Classical
Literature”**

**The defense of the dissertation will be held on January 15, 2020, at 14³⁰ at
the meeting of the Specialized Council of Literary Studies 012 at YSU.
Address: Yerevan, 52A Abovyan Str., YSU, Faculty of Philology, Room
202.**

SUMMARY

The dissertation studies two most popular translations of the “Book of Lamentations” by Grigor Narekatsi from grabar (Old Armenian) into Modern Armenian. On the example of Mkrtich Kheranyan's and Vazgen Gevorgyan's translations an attempt is made to study how translators perceive, interpret and reproduce Medieval work in modern Armenian, what problems they encounter while translating the text and what solutions they offer. The analysis of these translations not only provides an opportunity to evaluate translators' efforts, but also detect problems and some peculiarities of the translation, which in the future can contribute to the emergence of new, improved translations of the “Book of Lamentations”.

The dissertation consists of an Introduction, three Chapters, Conclusions and Bibliography. In the **introduction**, the relevance and scientific novelty of the topic are substantiated, the purpose and objectives of the study are formulated, a brief review of related literature is presented.

The first chapter – **“Rhythmic and Melodic Features of “Book of Lamentations” in the Translations”**, studies how much the foot (prosody), the rhyme and the rhythm of the original text are preserved in the translations. The four sub-chapters of this chapter reveal the peculiarities of translations of fragments of Narekatsi's work where different feet are used. It is noteworthy that the difficulties in preserving the foot are connected with the grammatical differences between the grabar and the modern Armenian language. The peculiarities of the transfer of alliteration and assonance, as well as more complex rhythmic structures, often used by Narekatsi, are also examined. Special attention is paid to the study of types of rhyme, especially, those created by Narekatsi, as well as the internal rhyme. Particular attention is paid

to reproducing the rhythmic peculiarities of the “Book of Lamentations”, since the rhythm of the work cannot be exactly reproduced in translations, and translators used various methods of transferring it.

The second chapter of the dissertation – **“Figurative-expressive Means of the “Book of Lamentations” in the Translations”**, discusses the methods of transferring the expressive means of the original text, such as epithet, metaphor, metonymy, periphrase. Special attention here is paid to the recreation of the repetitions, widely used in Narekatsi’s work: use of words with different meanings, repetition of the same thought, the same syntactic and grammatical constructions. The contrast in the original text and in the translations is analyzed from the point of view of the contrast of religious and secular thinking, man and God, the inner world of a man and the outside world, the world and the afterlife. The literary text and rhetoric are intertwined in Narekatsi’s work, and in order to recreate their integrity, it is important to find out how translators express rhetorical appeal, question and exclamation. Translations of quotes, set phrases and proverbs are also of particular importance, since they not only contribute to the creation of expressiveness, but are mainly taken from the Holy Scriptures, Psalms and Prophecies that describe a specific event and are often used to confirm a particular thought.

In the third chapter – **“The Vocabulary of the “Book of Lamentations” in the Translations”**, special attention is paid to the context, the time of creation of Narekatsi's work, the author’s idea, since the words acquire different meanings depending on these factors. This chapter analyzes in detail the translations of neologisms Narekatsi uses in his work. Often the content of the whole passage depends on the meaning of the neologisms, which means that their correct translation is important not only for the aesthetic expression of the original, but also for the transmission of its content. Particular attention is paid in the dissertation to the words, phrases and lines, which, due to the inability to translate, are sometimes overlooked or inaccurately translated. The chapter also examines the interaction of the original text and its various interpretations and translations.

In the **Conclusion** the main outcomes of the research are presented.

АПРЕСЯН АНУШ ГАГИКОВНА
“КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ” ГРИГОРА НАРЕКАЦИ В
ПЕРЕВОДАХ МКРТЫЧА ХЕРАНЯНА И ВАЗГЕНА ГЕВОРКЯНА

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.01.01 - “Армянская
классическая литература”

Защита диссертации состоится 15-ого января 2020 года в 14³⁰ на
заседании специализированного совета литературоведения 012 при
ЕГУ по адресу: г. Ереван, ул. Абовяна 52А, ЕГУ, филологический
факультет, аудитория 202.

РЕЗЮМЕ

В данной диссертации рассматриваются два наиболее популярных перевода “Книги скорбных песнопений” Григора Нарекаци с грабара на новоярмянский язык. На примере переводов Мкртыча Хераняна и Вазгена Геворкяна предпринимается попытка изучить, как переводчики воспринимают, интерпретируют и воспроизводят на современном армянском средневековое произведение, с какими проблемами сталкиваются при переводе и какие методы их решения используют. Изучение данных переводов не только предоставляет возможность оценить труд переводчиков, но и выявить проблемы и особенности перевода, которые в дальнейшем могут способствовать появлению новых, более совершенных переводов “Книги скорбных песнопений”.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы. Во **введении** обосновывается актуальность темы, научная значимость и новизна, излагаются цели и задачи исследования, дается обзор использованных первоисточников и критической литературы.

В первой главе – **“Ритмо-мелодические особенности “Книги скорбных песнопений” в переводах”**, рассматривается, насколько в переводах сохранен стихотворный размер, ритмика, рифма и ритм оригинального текста. В четырех подглавах данной главы выявляются особенности переводов отрывков произведения, написанных разными стихотворными размерами. Примечательно, что трудности в воссоздании стихотворного размера оригинала обусловлены в первую очередь грамматическими различиями между грабаром и современным армянским языком. В главе также рассматриваются особенности

перевода часто используемых в “Книге скорбных песнопений” аллитерации и ассонанса, а также более сложных ритмических структур. Уделяется внимание также рассмотрению передачи различных способов рифмовки, созданной автором новой рифмы и, самое главное, передачи внутренней рифмы. Особое внимание уделяется воспроизведению ритмических особенностей “Книги скорбных песнопений”, так как ритм произведения невозможно в точности воспроизвести в переводах, и переводчики прибегали к различным способам его передачи.

Во второй главе диссертации – **“Образно-выразительные средства “Книги скорбных песнопений” в переводах”**, рассматриваются способы передачи выразительных средств оригинала, таких как эпитет, метафора, метонимия, перифраз. Важным в этой главе является воссоздание повторов, поскольку в произведении Нарекаци имеются различные их проявления: использование слов с разными значениями, повтор одной и той же мысли, повтор синтаксических и грамматических конструкций. Противопоставление в оригинале и в переводах рассматривается с точки зрения присущего Средневековой противопоставления религиозного и светского мышления, человека и Бога, внутреннего мира человека и внешнего мира, мира и загробного мира. Художественный текст и риторика в произведении переплетены, и для того, чтобы воссоздать их целостность, важно выяснить, каким образом переводчики выражают риторическое обращение, вопрос и восклицание. Переводы цитат, крылатых выражений и пословиц также имеют особое значение, поскольку они не только способствуют созданию выразительности, но в основном взяты из Священного Писания, псалмов и пророчеств, которые описывают конкретное событие и часто используются для подтверждения той или иной мысли.

В третьей главе – **“Лексика “Книги скорбных песнопений” в переводах”**, особое внимание уделяется контексту, времени создания переводимого произведения, замыслу автора, так как в зависимости от этих факторов слова приобретают разные значения. В данной главе детально анализируются переводы неологизмов, которые Нарекаци использует в своем произведении. Зачастую содержание целого отрывка зависит от смысла неологизмов, а это означает, что их правильный перевод важен не только для эстетического восприятия оригинала, но и для понимания его содержания. Особое внимание уделяется в диссертации словам, фразам и строкам, которые, ввиду труднопереводимости, иногда упускаются из виду или неточно переводятся. Здесь же рассматривается взаимодействие оригинала, его различных интерпретаций и переводов.

В заключении приводятся итоги исследования.